368
Հ-94
1 MAR 2010
1008
36422

Հաստատված է
ՀՍԽՀ-ԺԿԽ կողմից
9 Դեկտ. 1929 թ.

# ՀՐԱՀԱՆԳ
## ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### Ց Ա Ն Կ

3. Ընթացիկ ցուցակագրություն.
1. Ընդհանուր ցուցմունքներ.
2. Պարտադիր կոոպերային ապահովագրության օբյեկտների համապարփակ ցուցակագրություն
4. Արտոնություններ ամենաչքավոր ընակչության և կարմիր բանակայինների ընտանիքներին.
5. Պարտադիր կոոպերային ապահովագրության վճարումների գանձումը.
6. Վնասների լուծարքումը.
ա. Անասունների անկումից,
բ. Կարկտահարությունից:

JUN 2013

43.842

# ԱՌԱՋԱԲԱՆ

Ներկայումս կոպարային ապահովագրությունը տարածվում է ամեն տեսակի գյուղատնտեսական գույքերի և վառանդների վրա: Ապահովագրության հաշվերի տարեկան է հանդիսանում՝ ապահովել վնասներից տնտեսությունների ճատկման դեպքում, ցանքերի կարկտահարության և ապահովագրության կրակից: Բացի դըրանից, մոտ ապագայում մտցվելու յե պատասխանատվություն շենքերի համար փոթորիկից, յերկրաշարժից, ջրհեղեղից և ցանքերի համար անբերրիությունից:

Այսպիսով, պետական ապահովագրությունը ՀՍԽ Հայաստանի գյուղի տնտեսական կյանքում կատարում է ավելի և ավելի նշանավոր դերն:

Այդ հանգամանքը նույնպես է այն, որ կոպարային ապահովագրությունը պարտադիր է հանդիսանում, նրանում պետք է խոշոր չափով մասնակցեն տեղական խորհրդային մարմինները, վարժեցնել առանց նրանց մասնակցության (ինչպես և Թ. Իշխան. ամեն տեսակի նախաձեռնությունը գյուղում) ապահովագրական աշխատակիցները չեն կարող կիրառել կյանքում այդ կարեվորագույն խնդիրը:



## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

§. 1.

Ըստ պարտադիր կոպարային ապահովագրության, գյուղխորհուրդների վրա դրվում են հետևյալ պարտականությունները.

1. Մասնակցել դաշտային ցանքերի և մյուս բուսական մշակույթների ու գյուղատնտեսական անասունների համապարփակ ցուցակագրությանը:

2. Անմիջականորեն վարել գյուղ. տնտ. մշակույթների և անասունների ցուցակագրումն (ընթացիկ):

3. Անմիջականորեն մասնակցել ամենաչքավոր բընակչության և կարմիր բանակայինների ընտանիքների միջև արտոնությունների բաշխմանը:

4. Ապահովագրության վճարումների գանձումը:

5. Կազմել կարկտահարությունից վնասված քաղաքացիների ցուցակը և մասնակցել կարկտից հասցրած վնասների չափը վորոշելու գործում:

## 2. ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

§. 2.

Գոյություն ունեցող կանոնադրությունների հիման վրա, պարտադիր կոպարային ապահովագրության յենթակա գույքի հաշվառումը, գյուղական վայրերում կատարվում է Ֆինժողկոմատի ագենտի կողմից, այդ առթիվ գյուղխորհուրդներին հանձնարարվում է՝

ա) Հսկել, վորպեսզի ցուցակագրության ժամանակ ցանքսի տարածության չափն ըստ մշակույթի տան-

ձին ցույց տրվի ճիշտ, նկատի ունենալով, վոր ցուցակագրությունից թաքցրված տարածությունը հասած վնասը Պետապը չի վճարում:

բ) Հսկել, վորպեսզի գյուղատնտ. անասունների հաշվառման ժամանակ ճիշտ ցույց տրվի անասունների քանակն ըստ յուրաքանչյուր տեսակի առանձին, վորովհետև անճիշտ հաշվառման դեպքում, Պետապը չի վարձատրում վնասը և գյուղային գրանից կորցնում է:

գ) Հսկել, վորպեսզի ցուցակագրությունը կատարվի անտեսությունները շրջելու և իրենց տերերին հարցաքննելու միջոցով:

դ) Ցուցակագրումը վերջացնելուց հետո, Պետապի գործակալի հետ միասին գյուղական համայքի ժողովում ստուգել կատարված ցուցակագրությունը, ըստ վորում ցուցակագրական ցուցակների ճշտությունը վավերացվում է գյուղխորհրդի նախագահի ստորագրությամբ և կնիքի դրոշմամբ:

## 3· ԸՆԹԱՑԻԿ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կատարված համապարփակ ցուցակագրությունից հետո, ապահովադրող գյուղացին պարտավոր է հայտնել գյուղխորհրդին իր տնտեսության անասունների կազմի մեջ տեղի ունեցած բոլոր փոփոխությունների մասին, այն է՝

ա) Անասունի վճարման և գնման մասին յերկու շաբաթվա ընթացքում:

բ) Անասունի անկման մասին նրա մահացության օրվանից յերկու օրվա ընթացքում:

գ) Անասունի ապահովագրական հասակի հասնելու մասին յերկու շաբաթվա ընթացքում:



դ) Կերակրելու, կաթնամթերքներն օգտագործելու համար և այլ պատճառներով իր տնտեսությունը բերված անասունների մասին յերկու շաբաթվա ընթացքում:

յե) Անասունի հիվանդանալու դեպքում 3 օրվա ընթացքում չկատարելու դեպքում ապահովադիրը զրկվում է ապահովագրական վարձատրությունից:

§· 4·

3-րդ կետում հիշված բոլոր դեպքերում գյուղխորհուրդն ապահովադրից իր տնտեսության անասունների կազմի մեջ յեղած փոփոխությունների մասին հայտարարություն ստանալու հանգամանքն ապացուցելու համար, նույն օրը տալիս է ապահովադրին Պետապի կողմից սահմանված ձևով վկայական (ձ· № 13), իսկ վերջինիս կտրոնն անմիջապես ուղարկում է տվյալ շրջանի Պետապի գործակալին:

Գյուղխորհրդի կողմից չկատարելու դեպքում, ապահովադիրը զրկվում է ապահովագրական վարձատրությունից և ամբողջ մեղավորությունն ընկնում է գյուղխորհուրդների վրա:

3· Արտոնություններ ամենաչքավոր բնակչության և կարմիր բանակայինների ընտանիքներին:

§· 5·

Կարմիր բանակայինների ընտանիքների, հաշմանդամների, գաղթականների և վերաբնակիչների համար կամավորային ապահովագրության վճարումների մուծման նկատմամբ սահմանված է հատուկ արտոնություն:

Արտոնությունների և զեղչերի ընդհանուր տոկոսը յուրաքանչյուր տարի սահմանվում է օրենքով և բաշխվում է տոկոսային հարաբերությամբ յելնելով տվյալ գյուղի վրա հաշված կոպարից:

§. 6.

Արտոնությունների բաշխման համար գ/խ. կազմում է հատուկ հանձնաժողով, վորի կազմի մեջ մտնում են՝ գ/խ. նախագահը, մեկական ներկայացուցիչ գյուղական փոխօգնության ընկերության և բատրակների, գյուղխորհրդի նախագահի նախագահությամբ, վորոխի հանձնաժողովն ստուգում է վճարումներից ազատելու ճշտությունը, հայտարարելով ժողովներում ապահովագրական վճարումներից ազատման յենթակա անձնավորությունների ցուցակը և կախում է այդ տեղի գյուղխորհրդում աչքի ընկնող տեղում:

§. 7.

Ապահովագրական վճարումների մուծումներից ազատվելու յենթակա յեն՝

ա) Հաշմանդամները, զաղթականները, վերաբնակիչները, կոլտնտեսությունները 33 ⅓-ի չափով:

բ) Ամենաչքավոր բնակչության վերաբերյալ նայած յեկամտի չափերին, 100 տոկոս, 50 տոկոս և 33 ⅓ տոկոս, համաձայն ՀՍԽՀ ԿԳԿ և ԺԿԽ կողմից հաստատված հատուկ հրահանգի:

§. 8.

Ազատելու համար, գործակալությունը կազմում է ազատման յենթակաների ցուցակ հետևյալ կարգով՝



ա) Կարմիր բանակայինների ընտանիքների, հաշմանդամների, զաղթականների և վերաբնակիչների:

բ) Չքավոր տնտեսությունները վերջիններիս աղքատության աստիճանի կարգով:

§. 9.

Ցուցակների ստուգման ժամանակ հանձնաժողովը պետք է ձեռք առնի բոլոր միջոցները վորպեսզի ապահովագրական վճարումներից ազատելը կատարված լինի ճիշտ, պահպանելով դասակարգային գիծ:

§. 10.

Արտոնություններ ստացած քաղաքացիների ցուցակները փակցվում են գյուղխորհուրդներում հասարակական վերահսկողության յենթարկելու համար:

§. 11.

Արտոնություններ տրամադրող հանձնաժողովը և Պետապի գործակալը ղեկավարվում են ԿԳԿ և ԺԿԽ կողմից ամեն տարի հրատարակվող հատուկ հրահանգով:

## 5. ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԳԱՆՁՈՒՄԸ

§. 12.

Ապահովագրական վճարումների գանձումը գյուղական վայրերում դրվում է գյուղխորհուրդների վրա:

§ 13.

Վճարումների գանձման համար գ/խ. ամեն տարի սեպտեմբեր ամսին Պետապի գործակալությունից պետք է ստանա.

ա) Ապահովագրական ծանուցագիր:

բ) Ապահովագրական անդորրագրերի գրքույկներ և

գ) Իր գյուղի վճարումների ցուցակները:

§ 14.

Ստացված և ծանուցագրեր, գյուղխորհուրդը պարտավոր է վոչ ուշ քան սեպ. 10-ը հանձնել բոլոր ապահովադիրներին և անցնել ապահովագրական վճարումների գանձմանն ըստ վորում առաջին հերթին պետք է գանձել անցյալ տարիների պարտքերը (հետնույթը) և ապա կոպարը:

§ 15.

Գյուղխորհուրդն ստացած դրամի համար պարտավոր է տալ ապահովադրին Պետապի կողմից տվյալ տարվա համար՝ սահմանված ապահովագրական անդորրագիրը:

Ստացած դրամի վրա մասնավոր անդորրագրեր և անցած տարիների ձևի անդորրագրեր տալն արգելվում է և խախտողները պատժվում են որենքով իբրև քրեական հանցագործներ:

§ 16.

Յեթե ապահովադիրը մուծում է իրենից հասանելիք կոպարը վոչ լրիվ, այլ մաս-մաս, գյուղխորհուրդը պարտավոր է յուրաքանչյուր մուծված գումարի համար ամեն անգամ տալ առանձին ապահովագրական անդորրագիր:

Օրինակ.— Մարկոս Կարապետյանը պետք է մուծի 9 ռ. հոկտեմբերին, նա մուծում է 5 ռ. և ստանում է այդ 5 ռ. համար անդորրագիր, իսկ մնացած 4 ռ. մուծում է դեկտեմբերին, վորի համար նույնպես ստանում է առանձին անդորրագիր 4 ռ.:

§ 17.

Դրամն ստանալուց անմիջապես գյուղխորհուրդը վճարումների ցուցակում վճարողի ազգանունի դիմաց նշում է կատարում այն մասին, վոր դրամն ստացված է և գրում է տրված ապահովագրական անդորրագրի №-ը:

§ 18.

Գործակալից ստացված անդորրագրի գրքույկները և վճարումների ցուցակները գ/խ. միշտ պետք է պահի իր մոտ և ըստ գործակալի պահանջի ներկայացնի նրան: Դուրս գրել ապահովագրական անդորրագրեր ուրիշ գանձումների համար, խստիվ արգելվում է:

§ 19.

Հավաքած ապահովագրական գանձումները գյուղխորհուրդը պարտավոր է անմիջապես վոչ ուշ քան մեկ շաբաթվա ընթացքում հանձնել Պետապի գործակալին:

§ 20.

Խստիվ արգելվում է հավաքած ապահովագրական գանձումները ծախսել մի վորևե ուրիշ նպատակների:

## 1. ՎՆԱՍՆԵՐԻ ԼՈՒԾԱՐՔՆ ԸՍՏ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

§. 21.

Գյուղխորհուրդը պարտավոր է լայն կերպով իրազեկ դարձնել բնակչությանն անասունի հիվանդանալու մասին 3 օրվա ընթացքում հայտարարելու անհրաժեշտության վերաբերյալ և անասունի մահացության մասին, նրա մահանալուց ոչ ուշ քան մեկ օր անցնելուց հետո։

§. 22.

Գյուղխորհուրդը պարտավոր է անասունի հիվանդության կամ անկման մասին հայտարարող ապահովադրին նույն օրը տալ վկայական Պետապի կողմից սահմանված ձևով (№ 13) ցույց տալով նրանում անասունի հիվանդության տեսակը կամ անկման պատճառը։

§. 23.

Գյուղխորհուրդը պարտավոր է անասունի անկումից ոչ ուշ քան յերկու օրվա ընթացքում կազմել յուրաքանչյուր սատկած անասունի վերաբերյալ անկման ակտ։

Ակտը կազմում է միայն սատկած անասունի դիակը յերկու վկաների—ապահովադրի և անասնատիրոջ ոչ ազգականների ներկայությամբ տեսնելուց հետո։ Ակտի կազմելն առանց դիակը տեսնելու և հետին թվով չի թույլատրվում և պատժվում է օրենքով։



§. 24.

Ակտը պետք է ստորագրված լինի գյուղխորհրդի նախագահի, յերկու վկաների և անասնատիրոջ կողմից և կնքված լինի գյուղխորհրդի կնիքով։

§. 25.

Ակտը կազմվում է մեկ օրինակից Պետապի բլանկի վրա անպայման լրացնելով ակտի (ձևի) բոլոր կետերը և մի գույնի թանաքով և մեկ ձեռագրով։

§. 26.

Ակտը կազմելու ժամանակ տուժողին և համագյուղացիներին հարցաքննելու միջոցով վորոշվում է սատկած անասունի շուկայի գինն առողջ դրության մեջ։

§. 27.

Ակտը կազմելու ժամանակ գյուղխորհուրդն ստուգում է տնտեսությունում մնացած անասունների թիվը և ակտում կատարում է համապատասխան նշումներ։

§. 28.

Այն դեպքերում, յերբ անասունը սատկել է ճանապարհին, գյուղխորհրդի շրջանում, թեկուզ և ուրիշ գյուղից կամ գավառակից, գյուղխորհուրդը նույնպես պարտավոր է կազմել ակտ և այդպիսին ուղարկել իր շրջանի Պետապի գործակալին։

§. 29.

Կազմված ակտը գյուղխորհրդին կից հանձնաժողովի կողմից հաստատելուց հետո, գյուղխորհուրդն անմիջապես, վոչ ուշ քան 3 օրվա ընթացքում ուղարկում է անմիջականորեն ապահովագրական գործակալին, ակտն անասնատիրոջն առանձին չի տրվում:

§. 30.

Կորած, գողացած և վաճառված ու առհասարակ տնտեսական նկատառումներով անասնատիրոջ կողմից մորթված անասունների մասին ակտ չի կազմվելու:

§. 31.

Գյուղխորհուրդն իրավունք չունի թույլտվություն տալ անասունին մորթելու առանց անասնաբուժական կայանի գրավոր թույլտվության, թեկուզ և ծանր հիվանդ անասունի, նույն թվում և անհաջող ծննդաբերությունից: Պետապը չի վճարում առանց անասնաբուժի թույլտվության մորթված անասունի համար նույն թվում և անհաջող հաջող ծննդաբերության պատճառով:

Սրանում մեղավոր գյուղխորհուրդները կենթարկվեն օրինական պատասխանատվության:

§. 32.

Գյուղխորհուրդն իրավունք ունի տալ անասունի մորթելու համար թույլտվություն միայն հետևյալ դժբախտ պատահարների դեպքերում և յեթե անասունին անմիջապես մահ է սպառնում:



1. Գազանների կողմից պատառոտումից, 2. Հրդեհից այրվելուց, 3. կայծակահարությունից 4. սուր առարկաների կուլ տալուց (յեթե այդ յերևում է դրսից), 5. սարից ընկնելը, 6. ճնշախեղդություն, 7. վոտի ուրիշ մասի կոտրվելը, 8. մի անասունի կողմից մյուսին խփելը, 9. պատահական գնդակից վիրավորվելը, 10. ջրհեղեղ, 11. փլում, 12. յերկրաշարժ, 13. ջրհորի մեջ ընկնելուց, 14. կամուրջի կոտրվելու դեպքում, վայր ընկնելուց կամ ավտոմոբիլների տակ ընկնելուց, 15. առհասարակ բոլոր այն դեպքերից, յերբ նրանք պատահել են անսպասելի և արտաքին պատճառների գործողության արդյունք են հանդիսացել:

§. 33.

Գյուղխորհուրդը պետք է պահանջի գործակալից, վորպեսզի նա վնասների վարձատրությունը կատարի գյուղում բացառապես հրապարակորեն և անպայման անասունի անկման փաստի ստուգումից հետո:

§. 34.

Գյուղխորհուրդը պարտավոր է աչքի ընկնող տեղում կախել այն անձնավորությունների ցուցակը, վորոնց տրված է վարձատրություն սատկած անասունի համար և վորոնց մերժել են, ցույց տալով մերժման պատճառները:

## 7. ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՍԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԼՈՒԾԱՐՔՈՒՄԸ

§. 35.

Գյուղխորհուրդները պարտավոր են ձեռք առնել

բոլոր միջոցներն, իրենց շրջանի բնակչության իրազեկ դարձնելու այն մասին, վոր կարկտահարության յուրաքանչյուր դեպքում նրանք պարտավոր են անմիջապես և վոչ ուշ քան 2 օրվա ընթացքում կարկտահարության օրվանից հայտնելու գյուղխորհրդին, նախազգուշացնելով, վոր բերքի հավաքելուց հետո վոչ մի հայտարարություն չի ընդունվում և վնասի համար Պետապը պատասխանատու չէ:

§ 36.

Գյուղխորհուրդները պետք է բացատրեն գյուղացիներին, վոր բոլոր վեճերը տարածության չափի և վնասի տոկոսի մասին պետք է վորոշվեն տեղում ակտը կազմելու ժամանակ Պետապի ներկայացուցչի կողմից և հետագայում վոչ մի դիմումներ չեն ընդունվի:

§ 37.

Գյուղխորհուրդներն անմիջապես և վոչ ուշ քան 3 օր տեղի ունեցած յուրաքանչյուր կարկտահարության մասին հայտնում են Պետապի գործակալին:

§ 38.

Գյուղխորհուրդները քաղաքացիների լիազորների Գյուղացիության Փոխօգնության Կոմիտեի ներկայացուցչի, հեծվորության խմբակի և ուրիշ հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ վոչ ուշ քան 3 օրից կազմում են վնասված քաղաքացիների ցուցակ Պետապի բլանկի վրա, ցույց տալով վնասված քաղաքացիների ցուցակը Պետապի բլանկի վրա, ցույց տալով վնասվածի ազգանունը, անունը և հայրանունը, վնասված տարածության չափն ըստ յուրա-



ՀՀ Ազգային գրադարան
NL0225372

քանչյուր մշակույթի, առանձին կարկտահարություններից հասած վնասի մոտավոր տոկոսը, նույնպես առանձին-առանձին յուրաքանչյուր մշակույթի համար և ամբողջ վնասված տարածության չափն ամեն մեկ տնտեսության համար:

§ 39.

Այդպիսով կազմված կարկտահարություններից վնասված գյուղացիների ցուցակը գյուղխորհուրդները նախքան Պետապի գործակալին ուղարկելը, 3-4 օրվա ընթացքում կախում են այնպիսի աչքի ընկնող տեղում, վորպեսզի գյուղացիները, ապահովագիրները հնարավորություն ունենան ստուգելու, արդյոք բաց չեն թողված ցուցակներում իրենց ցանքսերը:

§ 40.

4 օր անցնելուց հետո գյուղխորհուրդները ներկայացնում են Պետապի գործակալին կարկտահարությունից վնասված գյուղացիների ցուցակները:

§ 41.

Նախքան գյուղատնտեսի և Պետապի գործակալի գալը, գյուղխորհուրդները հրավիրում են վնասված ապահովագիրների ընդհանուր ժողով, վորոնք իրենց կողմից ընտրում են հատուկ հանձնաժողով, կամ լիազորներ վնասված տարածության չափի և վնասի տոկոսը վորոշելու ժամանակ մասնակցելու համար:

Գյուղխորհրդի նախագահի մասնակցությունն այդ հանձնաժողովում պարտադիր է:

ՊԵՏԱՊ

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖ

ՊԱՏ. 1849. ԳՐԱՌԵՊ. 4035 ՏԻՐԱԺ 1200

43.892